առնուլն զքո», իսկ ներքևում «Սարգիս Նըւաստ քահանայի»(1)։

Նոյն նիւթի հետ կապուած մի վերջին յուշարձան էլ ունինք Ժէ. դարից Սևանի



Պատկեր 46

Մանրանկար Ռոսլինի 1265 թուի, Երուս. N 1956, 171ա.

(1) Առնուած է Երուսաղէմի Հայոց N 1973 աւետարանից, 258բ։ Աւետարանը գրել է Ներսէս գրիչը 1346 թուին Սիս մայրաքաղաքում եւ նուիրել Մարիուն թագուհուն, որ Աւշին պայլի, Կոռիկոսի տիրոջ, դուստրն էր իւր ցոհաննայ երկրորդ կնոջից, «որ յառաջն թագուհի էր Աւշին թագաւորին». սոյն աւետարանի յիշատակարանի համեմատ (տե՛ս եւ Սամ. Անեցու Ժամանակագրութիւն, 1893 շար. եր. 157) եւ Կոստանդին թագաւորի (1344-1363) կինը։ Կոստանդին թագաւորի մայրն էլ, Պաղտին մարաջախտի կինը, կոչւում էր Մարիուն (համ. Ալիշան. Սիսուան. 243. 544)։

Մարիուն թագուհու եւ այս մանրանկարի գունագարդ արտանկարութիւնը՝ նկարիչ Եղիշէ Թադէոսեանի ձեռքով կատարուած, պիտի հրատարակենք մեր մանրանկարչական աշխատութեան մէջ, ուստի այստեղ մանրամասն նկարագրութիւն չենք տալիս։